

Լիլիթ Չայրապետյան

1948 թ. «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ՊԱՏԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԻՐԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Բանալի բառեր – Չայրոց ցեղասպանություն, Ցեղասպանության մասին կոնվենցիա, ցեղասպանության հանցագործություն, կանխամտածված ոչնչացում, միջազգային իրավական նորմ, հետադարձ ուժ, դրույթների կիրառելիություն:

Չայրոց ցեղասպանության շուրջ ծավալված քննարկումների ընթացքում հատկապես ուշադրություն է դարձվում հարցին միջազգային իրավունքի տեսանկյունից անդրադառնալու անհրաժեշտությանը: Արդիական է դարձել Չայրոց ցեղասպանության հիմնահարցը պատմական հարթակից իրավական հարթակ տեղափոխելու խնդիրը: Ասվածի ապացույց կարող է հանդիսանալ 2015թ. հունվարի 29-ին ընդունված Չայրոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը, որի 6-րդ կետում մասնավորապես ասվում է. «Արտահայտում է Չայաստանի և հայ ժողովրդի կամքը՝ Չայրոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչման հասնելու և ցեղասպանության հետևանքների վերացման հարցում, ինչի համար մշակում է իրավական պահանջների թղթածրար՝ դիտելով այն անհատական, համայնքային և համազգային իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ»¹:

Չայրոց ցեղասպանության հարցը իրավական հարթակ տեղափոխելու, միջազգային իրավունքի տեսանկյունից դիտարկելու խնդրում անհրաժեշտ է ծավալել բավականին բարդ ու համակարգված աշխատանք և տալ պատասխան որոշ առանցքային հարցերի:

Սույն հոդվածում կփորձենք որոշակիորեն պատասխանել այն հարցին, թե արդյոք 1948 թ. ՄԱԿ-ի կողմից ընդունված «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Ցեղասպանության մասին կոնվենցիա) դրույթները կիրառելի² են հայերի դեմ իրագործված ցեղասպանության նկատմամբ, և արդյոք Ցեղասպանության մասին կոնվենցիան ունի³ հետադարձ (ռետրոակտիվ) ուժ:

Ցեղասպանության մասին կոնվենցիան ընդունվել է 1948 թ. դեկտեմբերի 9-ին և ուժի մեջ մտել 1951 թ. հունվարի 12-ին: Տվյալ կոնվենցիայի հիմնական նպատակն էր հաստատել այն փաստը, որ ցեղասպանությունը դիտվում է որպես հանցագործություն՝ համաձայն միջազգային իրավունքի և մեկընդմիջտ ճանաչել ցեղասպանությունն արգելող ընդհանուր միջազգային իրավունքի նորմի գոյության փաստ ու սահմանել կոնվենցիայի բուն էությունը՝ հստակեցնել և մանրամասնել

¹ Չայրոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիր, <http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29/President-Serzh-Sargsyan-visit-Tsitsernakaberd-Genocide/>

ընդհանուր միջազգային իրավունքի նորմերով արդեն երկար ժամանակ արգելված արարքը¹:

Տվյալ եզրահանգումը Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պես հաստատվեց 1951 թ. ՄԱԿ-ի Միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացության մեջ, որում նշվում էր, որ «Կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքները ճանաչվում են բոլոր քաղաքակիրթ պետությունների կողմից որպես պարտադիր՝ նույնիսկ առանց որևէ կոնվենցիոնալ ամրագրման»²: Ներկայացված խորհրդատվական եզրակացությունը վերջ դրեց ցեղասպանության հանցագործության և Ցեղասպանության մասին կոնվենցիայի վերաբերյալ բանավեճերին՝ հաստատելով, որ կոնվենցիայի հիմնարար սկզբունքները պարտադիր են բոլոր պետությունների համար (*erga omnes*):

Հայոց ցեղասպանության վերլուծության տեսանկյունից հատկապես կարևոր են Ցեղասպանության մասին կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածները, որտեղ շարադրված են ցեղասպանություն հանցագործության հանցակազմը՝ այս կամ այն ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խումբը որպես այդպիսին լրիվ կամ մասնակի ոչնչացնելու մտադրությամբ կատարվող հետևյալ գործողությունները՝ այդպիսի խմբի անդամների սպանությունը, նման խմբի անդամներին լուրջ մարմնական վնասվածքներ պատճառելը, խմբի համար այնպիսի պայմանների կանխամտածված ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական բնաջնջմանը, խմբում ծնելիության կանխմանն ուղղված միջոցները, երեխաների հարկադրական փոխանցումը մարդկանց մի խմբից մեկ ուրիշին (հ.2)³: Պատժելի են ցեղասպանությունը, այն կատարելու նպատակով դավադրությունը, հրահրումը, ցեղասպանություն կատարելու փորձը և հանցակցելը (հ. 3)⁴:

Պետք է նշել, որ Ցեղասպանության մասին կոնվենցիայում ցեղասպանության հանցագործության սահմանման ամենազլխավոր չափորոշիչը ոճրագործների դիտավորությունն է (*intent*): Այսինքն կարելի է ասել, որ հանցագործությունը ցեղասպանություն որակելու համար առաջին հերթին պետք է ապացուցել հենց դիտավորության հանգամանքը: Այս հանգամանքի ապացուցման համար շատ կարևոր նշանակություն ունեն թուրքական ռազմական ատյանի արձանագրությունները: Ռազմադաշտային դատարանների կայացրած մի շարք դատավճիռներում կարևորվել են կանխամտածվածության և ցեղասպանական դիտավորության

¹ Տե՛ս Վարդանյան Վ., Հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար Թուրքիայի հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները, Երևան, 2006, էջ 24:

² Reservations to the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, Advisory Opinion, ICJ Reports (1951), pp. 15-69, See Diane F. Orentlicher, «Genocide» in Roy Gutman and David Rieff (eds.), Crimes of War, New York, 1999, pp. 153-157. Joe Verhoeven, «Le Crime de Génocide», in Revue belge de droit international, vol XXIV, 1991, pp. 5-26 at 13.

³ Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide. Adopted by the General Assembly of the United Nations on 9 December 1948-

<https://treaties.un.org/doc/Publication/UNTS/Volume%2078/volume-78-I-1021-English.pdf> .

⁴ Տե՛ս նույն տեղում:

գույգ գործոնները՝ որպես կենտրոնական իշխանությունների կողմից հայերի զանգվածային կոտորածների գլխավոր բնութագրիչներ¹:

Հայոց ցեղասպանության կանխամտածված լինելու, Թուրքիայի իշխող վարչակարգի կողմից ծրագրավորված և կազմակերպված լինելու հանգամանքը ապացուցվում է նաև բազմաթիվ փաստաթղթերում, որտեղ հստակ շարադրված է ազգաբնակչությունը զոհելու, վերացնելու բացահայտ դիտավորությունը: Այդ փաստաթղթերում օգտագործվել են այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են «արմատական լուծում», «լիկվիդացում», «ոչնչացում», «հայկական հարցի վերջնական լուծում»²:

Այդպիսի փաստաթղթերից մեկն էլ Թուրքիայի ներքին գործերի նախարար, Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից մեկի՝ Մեհմեդ Թալեթի հուշագիրն է, որտեղ հստակ շարադրվում են հայերի զանգվածային տեղահանության ծրագրի գլխավոր նպատակները: «Հայերին տեղահանելու որոշումը, - հայտարարել էր Թալեթը, - նպատակ ունի «հիմնովին լուծել և վերացնել» այդ անհանգստացնող գլխացավանքը»³: Սուտ մեկ տարի անց, երբ ցեղասպանության գործողությունները մեծ թափ առան, սեփական հաջողությամբ հիացած՝ Թալեթն իր վստահելիներից մեկին չարախնդությամբ հայտարարել էր, թե տեղահանությունների միջոցով «հայկական հարցը վճռականապես լուծվել էր»⁴:

Վերը նշվածից հստակ երևում է Հայոց ցեղասպանության կանխամտածված լինելու հանգամանքը, ինչպես նաև դիտավորության առկայությունը՝ լիովին ոչնչացնելու հայությունը Թուրքիայում: Ուստի լիարժեք կարող ենք ասել, որ Ցեղասպանության մասին կոնվենցիայում ամրագրված ցեղասպանության հանցակազմը 1915 թ. Հայոց ցեղասպանության իրավաբանորեն հստակցված նկարագրությունն է:

Հայոց ցեղասպանության առնչությամբ առաջանում է ևս մեկ հարց՝ կապված Ցեղասպանության մասին կոնվենցիայի հետադարձության (ռետրոակտիվ գործադրման) հիմնախնդրի հետ: Պետք է նշել, որ այս հիմնախնդրի հետ կապված՝ կան մի շարք տարածայնություններ. որոշ հետազոտողներ պնդում են, որ ցեղասպանության մասին կոնվենցիան կիրառելի է հայերի դեմ կատարված ցեղասպանության նկատմամբ, իսկ ոմանք էլ՝ հակառակը: Սակայն մեր հետազոտությունների արդյունքները թույլ են տալիս պնդել, որ 1948 թ. կոնվենցիայում նկարագրված հանցագործությունը և դրա պատժելիությունը կիրառելի են 1915 թ. Հայոց ցեղասպանության նկատմամբ: Փորձենք ներկայացնել մի շարք փաստարկներ սույն կարծիքը հաստատելու համար:

Ինչպես ցույց է տալիս Ցեղասպանության մասին կոնվենցիայի նախաբանը, Նյուրնբերգյան տրիբունալի կանոնադրության⁵ վերլուծությունը, մինչ տվյալ փաստաթղթերի ընդունումը միջազգային իրավունքում գոյություն են ունեցել ցեղա-

¹ Դադոյան Վ., Հայոց ցեղասպանությունը ազգային և միջազգային իրավունքի երկակի հիմնախնդիր, Երևան, 2012, էջ 36:

² Տե՛ս Դադոյան Վ., Հայոց ցեղասպանությունը ազգային և միջազգային իրավունքի երկակի հիմնախնդիր, էջ 41:

³ Տե՛ս Նույն տեղում:

⁴ Interior Ministry Archives, No. 54426, July 13, 1916.

⁵ Agreement for the Prosecution and Punishment of the Major War Criminals of the European Axis, and Charter of the International Military Tribunal. London, 8 August 1945.

սպանությունն արգելող և այն կատարելու համար պատասխանատվություն սահմանող սովորութային միջազգային իրավական նորմեր: Այսինքն՝ 1948 թ. ընդունված կոնվենցիան ոչ այլ ինչ է, քան արդեն գոյություն ունեցող միջազգային իրավական նորմերի հաստատում¹:

Ինչ վերաբերում է Նյուրնբերգյան դատավարություններին, ապա սույն դրանց անցկացման փաստը և ընդունած վճիռները մինչև նշված կոնվենցիայի ընդունումն արդեն իսկ վկայում են ներկայացված տեսակետի օգտին: Հակառակ մոտեցումը, այսինքն՝ ցեղասպանությունն արգելող պայմանագրային նորմերին նախորդող սովորութային նորմերի անկայության ժխտումը, ուղղակիորեն կասկածի տակ է դնում նշված դատավարությունների օրինականությունը, վճիռների իրավական հիմնավորվածությունը:

Նույնիսկ եթե մի պահ ընդունենք, որ վերը շարադրված փաստարկները գոյություն չունեն և որ Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումից առաջ համապատասխան միջազգային իրավական նորմեր գոյություն չեն ունեցել, ապա անգամ այդ դեպքում անկա են մեր դիրքորոշումը հաստատող պատշաճ իրավական հիմքեր: 1915 թ. թուրքական կառավարության իրականացրած ցեղասպանության առնչությամբ Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիությունը կարելի է հիմնավորել այդ գործողության և դրա հետևանքների շարունակական բնույթով: Այդ առումով Հայոց ցեղասպանությունը շարունակվում է մինչ օրս և կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ չեն վերացվել դրա հետևանքները: Ակնհայտ է, որ դեռևս շարունակվում են հայ ազգի ծուլման, մշակութային արժեքների, հուշարձանների, եկեղեցիների ոչնչացման գործընթացները: Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի մեծ մասը ստիպված է ապրել իր հայրենիքից դուրս՝ ամեն օր, ամեն ժամ դիմակայելով ազգային ինքնությունը կորցնելու, որպես ազգային հանրություն, առանձին էթնոմշակութային միավոր վերանալու վտանգին: Մեր ժողովրդի սփյուռքահայ հատվածը կամովին չի լքել իր հայրենիքը և տասնյակ տարիներ ստիպված է եղել մարտնչել իր ինքնության պահպանման համար, նա հայտնվել է այդ վիճակում բռնության հետևանքով: Եվ քանի որ Ցեղասպանության մասին կոնվենցիայի նպատակն է կանխել և պատժել որևէ ազգային խմբի համատարած կամ մասնակի բռնի ոչնչացումը, հայ ժողովրդի՝ 1915 թ. սկսված և մինչ օրս շարունակվող ցեղասպանությունը կոնվենցիայի կոպիտ խախտում է²:

Ավելացնենք, որ համաձայն իրավաբանության հիմնարար սկզբունքի՝ եթե իրավախախտումը և դրա հետևանքները շարունակվում են, ապա իրավախախտում սկսելու ժամանակը համապատասխան օրենքի կիրառման համար իրավաբանորեն էական չէ: Այլ կերպ ասած՝ օրենքի հետադարձ ուժի արգելքն այս դեպքում կիրառելի չէ³: Եթե նոր օրենք է ընդունվում, որն արգելում է արդեն սկսված իրավախախտումը, ապա այդ օրենքը կիրառվում է, եթե իրավախախտումը և դրա հետևանքները շարունակվում են:

¹ Տե՛ս Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, Բեյրութ, 1976, էջ 66:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, էջ 67:

Ցեղասպանության կոնվենցիայի հետադարձ կիրառելիության հարցում կարևոր նշանակություն ունի նաև այն, որ ՄԱԿ-ը 1968 թ. նոյեմբերի 26-ի կոնվենցիայում¹ հրաժարվեց կիրառել վաղեմության ժամկետը մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ, որոնց շարքում առաջինը ցեղասպանությունն է, որ վաղեմության ժամկետը չի կարող կիրառվել Նյուրնբերգյան տրիբունալի կանոնադրության և Ցեղասպանության մասին կոնվենցիայում նշված հանցագործությունների, ինչպես նաև զինված հարձակման պատճառով բռնագաղթի ենթարկելու կապակցությամբ՝ անկախ դրանց կատարման ժամանակից²: 1968 թ. կոնվենցիայի այս հստակ ձևակերպումը միանշանակ նախատեսում է, որ այն ամբողջությամբ վերաբերում է նշված բոլոր հանցագործություններին, անկախ այն բանից, թե երբ են դրանք կատարվել:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության վերաբերյալ Ցեղասպանության մասին 1948թ. կոնվենցիայում ամրագրված միջազգային իրավունքի սովորության խորմերի ամբողջական և անվերապահ կիրառելիության վերաբերյալ կարծիքը պետք է համարել հիմնավորված և գործող միջազգային իրավունքին լիովին համապատասխան:

Անհրաժեշտ ենք համարում ևս մեկ անգամ ընդգծել, որ նույնիսկ եթե կոնվենցիայի հետադարձ կիրառելիության անթույլատրելիության կողմնակիցները կարողանան ապացուցել իրենց դատողությունների ճշմարտացիությունը, ապա այդ դեպքում ևս այն սկզբունքները, որոնց վրա հիմնված է կոնվենցիան, կիրառելի կլինեն հայերի դեմ իրագործած ցեղասպանության կամ ցանկացած այլ ցեղասպանության նկատմամբ, որը կատարվել է ցեղասպանությունն արգելող միջազգային իրավական նորմի ձևավորումից հետո, սակայն մինչև Ցեղասպանության մասին կոնվենցիայի ուժի մեջ մտնելը:

Лилит Айрапетян, О применимости положений конвенции "О предупреждении преступления геноцида и наказании за него" к Геноциду армян, - Эта статья в основном изучает вопрос о применимости Конвенции 1948 г. к Геноциду армян. В частности, является ли Геноцид армян наказуемым в соответствии с положениями Конвенции. Также рассматривается вопрос, имеет ли Конвенция "О предупреждении преступления геноцида и наказании за него" обратную силу.

Lilit Hayrapetyan, Applicability of Provisions of Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide to Armenian Genocide, - This article mainly studies the issue of the applicability of the Genocide Convention of 1948 concerning the Armenian Genocide. Particularly, whether the Armenian Genocide is punishable according to the provisions of the Convention. The question of the retroactivity of the Convention on Genocide is also examined.

Լիլիթ Հայրապետյան - Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի, Ցեղասպանագիտության մագիստրոսական ծրագրի շրջանավարտ:



¹ Convention on the Non-Applicability of Statutory Limitations to War Crimes and Crimes Against Humanity, 26 November 1968:

² Տե՛ս նույն տեղում: